

մղեց զձին : Հազիւ թէ ձին մօտեցաւ տեղւոյն , Լսւալէր բոցավառ աչուրնե-
րով յարձակեցաւ խխնջալով դէպ 'ի ա-
նոր վրայ : Երբոր Լսւալէր տեղէն ցատ-
քեց , Լնդար՝ զօրն որ նիզակին կոթը
միայն հաստատուն բռնած էր՝ աշտա-
րակի մը պէս վար ինկաւ , և իրեն զի-
նուց շառաչիւնը արձագանգ հանեց
կրճին մէջ :

Եւ որ տեսան երեսուն հեծեալքը ,
թուչելով վազեցին եկան դիակին քով :
Օ արմացան տեսնելով որ փոշոյն վրայ
անկենդան տարածուեր էր ան՝ որ բո-
լոր Լրաբիա կը սասանեցընէր , և որուն
հսկայաձև հասակն աչքերնին գրաւած
էր : Լսւալէր Լսւալի կարաւանին ե-
տեէն իյնալ , որովհետեւ Լնդարայ խո-
րագիտութեամբն ամբողջ գիշեր մը
ժամանակ ունեցեր էր անիկայ Լսւի
ցեղին վրաններուն հասնելու . ուստի
դիւցազնի զէնքերը միայն կողոպտեցին՝
որ իբրեւ մեծ յաղթանակ մը իրենց ցե-
ղին տանին : Փուճ տեղը աշխատեցան
որ իր ձին ալ բռնեն . հաւատարիմն և
գոռոզն Լսւալէր , իր տիրոջը վրայէն մա-
հուան հօտը առնելէն ետքը՝ զգալով
որ ալ անկէ ետքը իրեն արժանաւոր
հեծեալ մը չէր կրնար գտնուիլ , կայ-
ծակէն աւելի երազ՝ փախաւ աներե-
ւոյթ եղաւ անապատին խորերը՝ ազա-
տութեան մէջ ասլերելու համար :

Եւսեն թէ ծեր շէյխին գութը շար-
ժելով այսպիսի դիւցազնի մը մահուանը
վրայ , որ այնչափ դիւցազնական քաջու-
թեամբք փայլեր էր , արտասուեց անոր
դիակին վրայ , ծածկեց զայն աւազով ,
և աս խօսքերս արտասանեց . “ Փառք
քեզի , ուլ քաջ մարտիկ , որ կենդանու-
թեանդ ատենը քու ցեղիդ պաշտպանն
եղար , և մահունէդ վերջն ալ քու
դիակովդ ու անուամբդ զեղբարդդ ա-
զատեցիր : Եւ որ իջնայ ցօղն ու զովա-
յրնէ քու վերջին քաջագործութեամբ
պսակած երկիրդ , ” :

ԳԻՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Կիկլոպայք :

Կիկլոպայք հրէշակերպ հսկաներ էին ,
և Պոսիդոնի ու Լմիտրիտեայ որդիքը ,
կամ ըստ այլոց՝ որդիք Երկնից և Եր-
կրի : Լրտաբոյ կարգի բարձր էր հա-
սակին , և մէկ աչք մը միայն ունէին
ճակտին մէջտեղը , ուսկից առնուած է
իրենց անունը , որ կընշանակէ Բոլորա-
պտուղներով կ'ապրէին , և ամենեւին օ-
րէնքի մը տակ չէին : Եւ համարուի թէ
ասոնք շինած ըլլան Սիւկենէ և Տիւ-
րենթ քաղաքները , որոնց շինութեանն
համար այնպիսի մեծ քարի զանգուած-
ներ կը գործածէին , որ անոնցմէ ամե-
նէն պզտիկն ալ փոխադրելու համար
երկու ջուխտ եղ պէտք էր : Երբոր ա-
սոնք ծնան , Լրամազդ Տարտարոսի
մէջ գահավիժեց զիրենք , բայց վերջէն
ազատութիւն շնորհեց՝ իրենց մօրը միջ-
նորդութեամբն , որ գուշակեր էր իր
յաղթութիւնը Կլոնոսի վրայ : Եւսն
ատեն Կիկլոպայք Պլուտոնի համար սա-
ղաւարտ մը շինեցին , որով անտեսանե-
լի կ'ըլլար անիկայ . Պոսիդոնի համար
ալ երեքժանին , որով կը խռովէր ու կը
խաղաղէր ծովը . և Լրամազդայ հա-
մար՝ կայծակը , որով կը դողայընէր առ-
տուածներն ու մարդիկը : Վարքնու-
թիւն կ'ընէին Հեփեստոսի , և իրենց
աշխատութեան տեղը Լեմնոս կղզւոյն
մէջն էր . թէպէտ թուով հարիւրէ ա-
ւելի էին , բայց մէջերնին գլխաւորները
իրեք էին . Բրոնտէս , որ զկայծակը կը
դարբնէր , Ստերոպէս որ զանիկայ սա-
լին՝ վրայ կը բռնէր , և Պիրակմոն որ
ուռով կը զարնէր անոր : Լսւոն Լսկիւ-
պիոսի՝ իր որդւոյն վրէժն առնելու հա-
մար , որ կայծակով սպաննուեր էր , նե-
տով զարկաւ զանոնք ամէնն ալ ու ջըն-
ջեց երկրէս : Հոմերոս և Թէոկրիտէս
կ'ըսեն թէ Կիկլոպայք էին Սիկիլիոյ
նախնի բնակիչները , և մարդակեր կը

ստորագրեն զանոնք : Սկսել տ բոլոր աշխարհ չար կը սեպէր զիրենք , 'ի վերայ այսր ամենայնի աստուածոց կարգը դասուեցան , և 'ի Կորնթոս տաճարի մը մէջ բազին մը նուիրուած էր իրենց , որուն վրայ զոհներ կ'ըլլուէր :

Սակայն զիցաբանները իրեք զանազան տեսակ Կիկլոպայք կը դնէին . Ա . Եսիոդոսի յիշատակած Կիկլոպաները , որոնք այլաբանական էակներ էին . Բ . 'ի Հոմերոսէ Սիկիլիոյ բնակիչք սեպուածները . Գ . այն Կիկլոպայքը , որ կը պաշտուէին 'ի Կորնթոս իբրեւ ճարտարապետութեան հնարողք :

Ըրդի գիտունները Կիկլոպայից առասպելն ուրիշ բան չեն համարիր՝ բայց եթէ հրաբուխներու խորհրդական նըշանակը . և իրենց կարծիքը հետեւեալ պատճառներով կը հաստատեն : Հիները Կիկլոպայից դարբնոցները Սիկիլիոյ Եստնա լեւան տակ , և Եմնոս ու Իւբարի կղզեաց մէջ կը դնէին , որ անոնք ալ առջինին պէս հրաբուխ ունին : Կիկլոպայք որդիք էին Երկնից և Երկրի , որովհետեւ հրաբուխներուն զուխը բարձր է երկրիս երեսէն և արմատը հողուն խորը . կամ որդիք Պոսիդոնի , որովհետեւ սովորաբար ծովը այս լեւանց ստորոտը կ'ոռոգանէ : Հսկայաձև էր հասակնին , վասն զի հրաբուխները շատ բարձր են . մէկ փայլուն աչք մը միայն ունէին իրենց ճակտին մէջտեղը , որ կը նշանակէր հրաբուխներու խառնարանը : Իրենց դարբնած կայծակները կը շինէին իրեք իրեք ճառագայթներով ջրոյ , միգի և հրոյ , որ ականարկութիւն է այն երեւոյթներուն՝ որ կը տեսնուին հրաբուխներու պատառման միջոցը :

ԾԱՂԿԱՌԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Կեանք մարդկան :

Իբրեւ զճանապարհ են կեանք մարդոյ , ոյր սպառուած հայի յանդունդս ահագին : Յայս խրատիմք անդստին յառաջին քայլափոխից . այլ տուան օրէնքն , յառաջել հարկ է անդուլ : Բնդրէն դառնալ ախորժեմք . յառաջ , յառաջ : Բեռն անվկանդ և բուռն զօրութիւն վարեն զմեզ , և յանդունդս անդր հարկ է փութալ : Բիւր խէթ և խութք և բազմաբիւր ցաւք պարտասեն զմեզ և տագնապեն յուզող : Իցիւ թէ էր ինչ և այնպէս ճողոպրել յահագին անդրնդոցն . ոչ , ոչ . հարկ է յառաջել , ընթանալ պիտի : Բայտէս սրավար են ամբ : Բայլ քերեալ մերթ ընդ մերթ առ հեզասահ վտակօք և առ ծաղկամբք որ անցանեն՝ մխիթարիմք նոքօք : Բխորժեմք անդ առնուլ զտեղի . յառաջ , յառաջ : Եւ ահա թաւալի 'ի թիկանց մերոց ամենայն ընդ որ անցաք , կործանումն ահեղ , բեկումն մեծ : Իրնդամբ փոխանակ զի անմեք ընդ մեզ փունջ ծաղկանց քաղելոց զճանապարհայն , զորս յառաւօտէ ցերեկոյ տեսանեմք թառամեալս 'ի ձեռին , և միրգս՝ զոր սպառեմք ճաշակմամբ : Յնորք , պատրանք : Յանգ քարշեալ մերձիմք 'ի վիհն ահագին : Բնայնի սկիզբն լինի նսեմանալոյ . պարտեզք կարճեն զծաղիկս , ծաղկունք զփայլ գեղցն և զերանգոցն կենդանութիւն , մարգագետինք ոչ այնպէս ծիծաղախիտք , ջուրք ոչ նոյնպէս ականակիտ . աղօտանայ ամենայն , ամենայն ինչ նսեմանայ : Բնդառաջեն ստուերք մահու , և գուշակեմք զանձինս հուպ 'ի բերան անդնդոցն մահառիթ . այլ անհրաժեշտ է գնալ յեղերսն : Բայլ մի ևս և ահա քստմունք գնան ընդ անդամս , ցնորին միտք , աչք մթաղնին : Յառաջել պէտք են : Յօժարիմք այսրէն դառնալ . չիք հնար . ամենայն ինչ կործան , ամենայն ինչ անհետ , ամենայն ինչ փախստական :

ՊՈՍԻԻԷ